

ԳԵՎՈՐԳ ԿՈՍՏԱՆՅԱՆ

Իրավաբանական գիտությունների թեկնածու, դոցենտ,

ՀՀ ԳԱԱ փիլիսոփայության, սոցիոլոգիայի և

իրավունքի ինստիտուտի դոկտորանտ

ՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՅԵՑՈՂՈՒԹՅԱՆ ԴՐՍԵՎՈՐՄԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐԸ ԸՆՏԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՔՆԵՐԻ ԵՎՐՈՊԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՆԱԽԱԴԵՊԱՅԻՆ ԻՐԱՎՈՒՔԻ (ԳԻՏԱ-ԳՈՐԾՆԱԿԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ)

Հոդվածում քննության է առնվում պետության հայեցողական լիազորությունների հարցը Մարդու իրավունքների եվրոպական դատարանի «նախադեպային իրավունքի» լույսի ներքո: Հոդվածի շրջանակներում նաև ուրույն մեկնարաննություն է տրվում պետության հայեցողության սահմաններին:

Հիմնարարեր՝ Եվրոպական խորհրդի, նախադեպային իրավունք, «պետության հայեցողության ազատություն», միջազգային իրավիճակ, վարչական հայեցողություն, մարդու իրավունքներ, կոնվենցիան»

Համաձայն Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի՝ (այսուհետ՝ նաև Կոնվենցիա) Մարդու իրավունքների եվրոպական դատարանի հիմնական առաքելությունն է ապահովել Կոնվենցիայի անդամ պետությունների կողմից ստանձնած պարտավորությունների պատշաճ կատարումը¹: Այս առաքելությունը հաջողությամբ իրականացնելու համար Եվրոպական դատարանը պարտավոր է Եվրոպայի խորհրդի անդամ 47 պետությունների դեմ բերված գանգատներով կիրառել Կոնվենցիայով ամրագրված մարդու իրավունքների պաշտպանության միատեսակ չափանիշներ: Կոնվենցիան որևէ տարբերակված մոտեցում չի նախատեսում անդամ որևէ պետության համար՝ կապված Կոնվենցիայով ամրագրված իրավունքների կամ ազատությունների պաշտպանության հետ: Մի կողմից նման մոտեցումը ակնհայտորեն արդարացված է, քանի որ Եվրոպայի խորհրդի ստեղծման հիմքում դրված է կազմակերպության անդամ պետությունների կողմից ընդհանուր արժեքների և չափանիշների պաշտպանությունը և առաջնադաշտությունը: Այս մոտեցումը հստակ ձևակերպված է հենց Եվրոպայի խորհրդի Կանոնադրության նախարանում:

«...Վերահաստատելով իրենց հավատարմությունը այն հոգեկան և քարոյական արժեքներին, որոնք իրենց ժողովուրժների ընդհանուր ժառագործությունն են և անհատի ազատության, քաղաքական ազատության և իրավունքի գերակայության ալյուրը. սկզբունքներ, որոնց վրա հիմնվում է իշկական ժողովրդավարություն»:

Նմանատիպ հստակ մոտեցումը իր արտացոլումն է ստացել նաև Մարդու իրավունքների Եվրոպական կոնվենցիայի նախարանում:

«...կրկին հավաստելով իրենց խորին հավա-

տը այդ հիմնարար ազատությունների նկատմամբ, որոնք արդարության ու խաղաղության հիմքն են աշխարհում, և որոնց լավագույն պահպանումը կախված է, մի կողմից, քաղաքական արդյունավետ ժողովրդավարությունից և մյուս կողմից, մարդու՝ դրանց վերաբերող իրավունքների ընդհանուր ըմբռնումից ու պահպանումից»:

Այսպիսով՝ կարելի է եզրակացնել, որ Եվրոպայի խորհրդի համար, ընդհանրապես, և Եվրոպական կոնվենցիայի համար, մասնավորապես, գործունեության հիմնական նպատակը անդամ պետությունների համար համընդիմանուր արժեք ներկայացնող մոտեցումների և չափանիշների պաշտպանությունն է, ինչը, նվազագույնը, ենթարկում է, որ Եվրոպայի խորհրդի անդամ յուրաքանչյուր պետության համար Կոնվենցիայով ամրագրված արժեքները, իրավունքներն ու ազատությունները խորապես գիտակցված առաջնահերթություններ են: Այս պնդման համար որպես ապացույց է հանդիսանում այն, որ Եվրոպայի խորհրդի անդամ բոլոր պետություններն իրենց ներպետական ընթացակարգերի պահպանմամբ ստորագրել և վավերացրել են Եվրոպական կոնվենցիան:

Սակայն մյուս կողմից անհնար է հաշվի չառնել այն հանգամանքը, որ ներկա պահին Եվրոպայի խորհրդի անդամ են հանդիսանում 47 պետություններ, որոնք եւ Եվրոպական կոնվենցիայի անդամ պետություններն են: Հետևաբար՝ Դատարանը գործ ունի 47 տարբեր պետությունների հետ, իրենց ուրույն իրավական, կրոնական, սոցիալ-տնտեսական, սովորության, ժողովրդագրական, ժողովրդավարական և այլ առանձնահատկություններով, և որ առանց այս առանձնահատկությունները հաշվի առնելու անհնար կինդի ապահովել Եվրոպական կոնվենցիայով ամրագրված մարդու իրա-

ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅՈՒՆ

Վունքների պատշաճ պաշտպանությունը Կոնվենցիայի անդամ բոլոր պետություններում:

Այս համատեքստում խոսքը, իհարկե, չի գնում Կոնվենցիայով ամրագրված իրավունքների ընտրողաբար կիրառման կամ դրանց պաշտպանության նվազեցման կամ ավելացման մասին՝ կախված տվյալ պետության առանձնահատկություններից: Խոսքն իրականում, միևնույն նպատակին հասնելու փոքր-ինչ տարբեր ճանապարհներ ընտրելու մասին է՝ կախված այս կամ այն պետության կամ հասարակության լեզվին առանձնահատկություններից, որը, ճիշտ կիրառման դեպքում, ավելի արդյունավետ է դարձնում Կոնվենցիայով ամրագրված իրավունքների պաշտպանությունը:

Եվրոպական կոնվենցիոն համակարգի մյուս կարևոր առանձնահատկությունն էլ այն է, որ Եվրոպայում մարդու իրավունքների արդյունավետ պաշտպանությունը իրականացնելու համար Դատարանը ոչ միայն պետք է հաշվի առնի անդամ պետությունների առանձնահատկությունները, այն նաև ընդիանուր միջազգային իրավունքի տեսանկյունից, ի թիվս, այլ հանգանակների, սահմանափակված է պետությունների ինքնիշխանության սկզբունքով: Պետությունների ինքնիշխանության սկզբունքով սահմանափակված լինելը Եվրոպական դատարանի պարագայում ենթադրում է, որ մինչ Դատարանը կարձանագրի անդամ պետություններից որևէ մեկի կողմից իր միջազգային պարտավորությունների խախտումը, այն պարտավոր է հնարավորություն ընձեռել տվյալ պետությանը՝ շտկելու խախտումը իր ներպետական կառուցակարգերի միջոցով: Այս սկզբունքը հստակ ամրագրված է Կոնվենցիայի 35(1) հոդվածով³:

Հետևաբար, Եվրոպական դատարանի առաքելությունն է Կոնվենցիայով ամրագրված իրավունքների և ազատությունների պաշտպանությունը իրականացնել մի կողմից հաշվի առնելով պետությունների ինքնիշխանությունը, մյուս կողմից՝ ամրագրված իրավունքների համընդիանուր բնույթը և, վերջապես, երրորդ կողմից՝ Կոնվենցիայի անդամ պետությունների առանձնահատկությունները: Նշված «եռանկյունու» սահմաններում արդյունավետ գործունեություն իրականացնելու և Կոնվենցիայի՝ պաշտպանի իր առաքելությունը պատշաճ իրականացնելու համար Դատարանն իր նախադատային իրավունքի միջոցով կիրառության մեջ է դրել և տասնամյակներ շարունակ հաջողությամբ կիրառում է մի շարք իրավական գործիքներ և սկզբունքներ:

Մարդու իրավունքների և ազատությունների պաշտպանության մասին Եվրոպական կոնվենցիայի վավերացման պահից, պետությունները ստանձնում են որոշակի պարտավորություններ,

որոնք կիրառելի են տվյալ պետության կողմից՝ անկախ իրենց ներպետական կարգավորման առանձնահատկություններից: Այնուամենայնիվ, նշված առանձնահատկությունների անհուսափելի գոյությունը ինքնին հանգեցրեց պետությունների կողմից ոչ միայն Կոնվենցիայի միատեսակ իմպենտացման անհարիսության, այլև՝ որոշակի փաստերի դեպքում՝ կոնվենցիոն նորմերի կիրառման անթույլատրելիության:

Նշված առանձնահատկությունների, ինչպես նաև այլ իմքների առկայությամբ պայմանավորված՝ Կոնվենցիան, ամրագրելով մարդու իրավունքները, միաժամանակ մի շարք հոդվածներում նախատեսում է Կոնվենցիան ստորագրած պետությունների կողմից համապատասխան պարտավորությունների կատարումից ձեռնպահ մնալու որոշակի դեպքեր և իմքներ : Այսինքն, հաշվի առնելով, որ մարդու իրավունքները չեն կարող լինել անսահմանափակ, Կոնվենցիան նախատեսում է որոշակի իմքներ և պայմաններ, որոնց առկայության դեպքում պետությունը, ըստ եռիյան, ձեռք է բերում այդ իրավունքներին միջամտելու իրավասությունը կամ՝ ազատվում է իր պողիտիվ պարտականությունների կատարումից: ուրը վերաբերում է հետևյալին. մարդու յուրաքանչյուր իրավունք առաջացնում է համապատասխան պողիտիվ պարտականությունների կատարումից: ուրը վերաբերում է հետևյալին. մարդու յուրաքանչյուր իրավունք առաջացնում է համապատասխան պողիտիվ պարտականությունների կատարումից: Այսինքն, ինչպես նաև, ձեռնարկելու անհրաժեշտ միջոցներ՝ ապահովելու մարդու իրավունքների պատշաճ իրացման հնարավորությունը: Սակայն, Կոնվենցիայով նախատեսված որոշակի իմքների առկայության պայմաններում, պետությանը իրավունք է վերապահվում ոչ միայն ձեռնպահ մնալ այդ պարտականությունների կատարումից, այլև՝ սահմանափակել մարդու տվյալ իրավունքի իրացման փաստացի հնարավորությունը: Այսինքն, Կոնվենցիան պետություններին օժտում է որոշակի հայեցողությամբ՝ կիրառելու որոշակի սահմանափակումներ կամ ձեռնպահ մնալու որոշակի պարտավորությունների կատարումից: Բնականաբար, պետությունների այդ ազատությունը ևս պետք է լինի սահմանափակման առարկա, հակառակ դեպքում՝ կիսնագեցնի մարդու իրավունքների համակարգային ունահարումներին: Այդ նպատակին են ուղղված կոնվենցիոն այն դրույթները, որոնք սահմանում են հստակ իմքներ և պայմաններ, որոնց առկայության դեպքում միայն պետությունների կողմից պարտավորությունների չկատարում կարող է համարվել ընդունելի:

Սակայն, թե արդյոք պարտավորությունների կատարումից հետ կանգնելով անհրաժեշտ էր և ընդունելի՝ կախված է պետության հայեցողությունից: Դատարանը բազմաթիվ գործերով սահմանել է, որ,

որպես կանոն, որոշելիս արդյոք գոյություն ունի այդ պահանջմունքը, որն արդարացնում է այս կամ այն սահմանափակումը և ինչ միջոցներ պետք է նախաձեռնվեն, որպեսզի այն բավարարեն, ազգային իշխանություններն օգտվում են հայեցողության որոշակի ազատությամբ։ Այնուամենայնիվ, հայեցողության տվյալ ազատությունը բացարձակ չէ և ենթարկվում է վերահսկողության Եվրոպական դատարանի կողմից, որը պետք է իր որոշմամբ սահմանի՝ արդյոք պետության կողմից իր հայեցողությունից օգտվելը համապատասխանում է Կոնվենցիայով սահմանված պահանջներին։ Իրականացնելով այդ վերահսկողությունը՝ Դատարանը նպատակ չի հետապնդում իր մոտեցումներով փոխել համապատասխան ներպետական մարմինների դիրքորոշումը, այն ավելի շուտ կոչված է Կոնվենցիայի և ամբողջ գործի հանգամանքների լույսի ներքո ստուգել ազգային դատարանների կողմից կայացված որոշումները, որոնք նրանք կայացնում են օգտագործելով իրենց հայեցողության իրավունքը։

Այսինքն, ինքնին պարզ է դառնում, որ պետությունների հայեցողության ազատությունը բավականին բարդ և զգայուն ինստիտուտ է և կոչված է մի կողմից ապահովելու պետությունների իրավական համակարգերի անկախությունն ու ինքնուրույնությունը, մյուս կողմից՝ պետությունների կողմից մարդու իրավունքների իրականացումն ապահովող պատշաճ պայմանները։ Դատարանը սահմանում է, որ. «... որպես Դատարանի իրավակիրառ պրակտիկա ճանաչված հայեցողության սահմանների սկզբունքը պետք է մշտապես հաշվի առնվի, սակայն Կոնվենցիայով ընդորվելով իրավունքների և ազատությունների իրականացումը կանոնակարգող նորմերի երկու համակարգերի միջև տարբերությունը կարող է շատ մեծ լինել, որպեսզի այդ սկզբունքը միշտ ծառայի որպես նրանց միջև կապող կամուրջ։»։ Իրականում, հայեցողության ազատության հայեցակարգի կիրառումը բույլ է տալիս դարձնել Կոնվենցիայի համակարգը առավել ճկուն, սակայն, միաժամանակ, տվյալ հայեցակարգի կիրառումը չփետք է հանգնեցնի մարդու իրավունքների եվրոպական պաշտպանության ամբողջ մեխանիզմի արժեզրկմանը։ Հետևաբար, անհրաժեշտ է ամրագրել այնպիսի պայմաններ, որոնք կապահովեն հավասարակշռությունը նշված երկու ինստիտուտների միջև։ Պետություններին վերապահած պահանջմանը կողմից կառուցած համակարգին մեծ ճկունություն, քանի որ տարբեր եվրոպական երկրների տեսակետները որոշ զգայուն հարցերի շուրջ, շոշափում են ավելի շուտ երկրի բարոյական-պատմական, սովորության, արժեքային հիմքերը, որոնք միշտ չեն որ համընկնում են, հետևաբար դրանց որոշումը կախված է տեղական իշխանությունների դիրքորոշումից։

Ըստ որոշ տեսաբանների, սկզբունքի գոյության նպատակը հանդիսանում է լրացուցիչ իրավական դաշտի ստեղծումը, որը նա վերագրում է պետություններին, այլ ոչ թե՝ սահմանների ֆիքսումը։ Ըստ հետինականների՝ «ազատություն» հասկացությունը առավել լայն է ծավալով, քան «սահմանները», այն պատճառով, որ, ըստ էության, ներառում է «սահմանները» իր կազմի մեջ, քանի որ վերջիններս հանդիսանում են այն կոնկրետ իրավական տարածության մաս, որին Դատարանը ան-

կարգում, ոչ էլ՝ Կոնվենցիայում, այլ սահմանվում է բացառապես Դատարանի որոշումներով։ Ընդ որում, նկատի ունենալով, որ Դատարանը բազմից իր որոշումներում ամրագրել է, որ Կոնվենցիան կենդանի օրգանիզմ ⁸ է, հետևաբար, Դատարանի կողմից սահմանված չափանիշները ևս չեն կարող համարվել կայուն և կանխատեսելի։ Այսինքն, պետությունների հայեցողության պայմանները ստատիկ դրսերում չունեն և չեն կարող ունենալ, քանի որ Դատարանի կողմից կոնվենցիոն դրույթների մեկնաբանություններն, ինքնին, կանխատեսելի և որոշակի են միայն որոշակի ժամանակահատվածում և որոշակի փաստերի առկայության դեպքում։

Այս իմաստով անհրաժեշտ է անդրադառնալ հայեցողության ազատության իրավական իմաստին։ Տվյալ ինստիտուտի առաջացման անհրաժեշտությունը պայմանավորված էր նրանով, որ պետություններին պետք էր տրամադրել կոնվենցիոն իրավունքների երաշխավորում, հետևաբար, դրանց իրականացումը սահմանափակելու անհրաժեշտության դեպքում, կոնվենցիոն կարգավորումներից շեղվելու հմարավորություն։ Դա հնարավորություն է տալիս ազգային դատարաններին ապահովել արդյունավետություն ներպետական հարքության մեջ գործերի քննության նկատմամբ, քանի որ պետությունները, ի սկզբանե գտնվում են առավել շահեկան դրության մեջ՝ իրենց ներքին խնդիրները ճիշտ և արագ լուծելու համար, քանի միջազգային կազմակերպությունը է, հետևաբար, պետությունները որոշումներ ընդունելիս պետք է օժնված լինեն որոշակի ինքնուրույնությամբ, որոնք միաժամանակ չպետք է դուրս գան Կոնվենցիայի շրջանակներից։ Մյուս կողմից, հայեցողության որոշակի ազատության տրամադրումը տալիս է Եվրոպայի խորհրդի կողմից կառուցած համակարգին մեծ ճկունություն, քանի որ տարբեր եվրոպական երկրների տեսակետները որոշ զգայուն հարցերի շուրջ, շոշափում են ավելի շուտ երկրի բարոյական-պատմական, սովորության, արժեքային հիմքերը, որոնք միշտ չեն որ համընկնում են, հետևաբար դրանց որոշումը կախված է տեղական իշխանությունների դիրքորոշումից։

Ըստ որոշ տեսաբանների, սկզբունքի գոյության նպատակը հանդիսանում է լրացուցիչ իրավական դաշտի ստեղծումը, որը նա վերագրում է պետություններին, այլ ոչ թե՝ սահմանների ֆիքսումը։ Ըստ հետինականների՝ «ազատություն» հասկացությունը առավել լայն է ծավալով, քան «սահմանները», այն պատճառով, որ, ըստ էության, ներառում է «սահմանները» իր կազմի մեջ, քանի որ վերջիններս հանդիսանում են այն կոնկրետ իրավական տարածության մաս, որին Դատարանը ան-

ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅՈՒՆ

վամել է «հայեցողության ազատություն»¹⁰:

Մեջքերված տեսակետները իրենց հիմքում չեն արտացոլում կարևոր մի շարք հանգամանքներ՝ ո՞վ է սուրյեկտը, ո՞մ է տրված հայեցողություն, և ո՞վ է որոշում հայեցողության համաշփությունը։ Այս հարցերի ամբողջացման պարագայում միայն, մեր կարծիքով, հնարավոր կլինի տալ հստակ ձևակերպում։

Մասնավորապես, Կոնվենցիան իր բազմաթիվ հոդվածներում սահմանում է պետության կողմից պողիտիվ պարտականությունների կատարման ժամանակ իր հայեցողությամբ դրանք կատարելու կամ, ավելին՝ մարդու իրավունքների իրականացումը սահմանափակելու հնարավորություն։ Հետևաբար, հայեցողությունը դա պետությանը տրված հնարավորությունն է՝ կիրառելու միջամտությունների՝ մարդու այս կամ այն իրավունքների իրացման նկատմամբ։ Այսինքն, պետությունը ունի իրավունք իր հայեցողությամբ միջամտելու մարդու իրավունքների իրացմանը յուրաքանչյուր կոնկրետ դեպքում։ Սակայն, որպեսզի պետությունը կամայական դրսերում չունենա տրամադրված հայեցողության կիրառման հարցում՝ Դատարանն իր մեկնաբանություններում, յուրաքանչյուր դեպքում, քննարկման առարկա է դարձնում՝ արդյո՞ք պետությունը անհրաժեշտ սահմաններում է կիրառել իր հայեցողությունը։ Եվրոպական դատարանի իրավասության քաննարկման ժամանակ, տարբեր հեղինակներ Դատարանի դերը դիտարկում են ոչ թե որպես հայեցողության շրջանակները սահմանող, այլ պետության կողմից կիրառված հայեցողության չափանիշների վերահսկողության դրսերող սուրյեկտ։ Այսինքն, հայեցության շրջանակները որոշում է պետությունը, Դատարանը միայն վերահսկողություն է իրականացնում դրանց նկատմամբ։ Սակայն, մոտեցումը չի դիմանա քննադատությանը, քանի որ ի վերջո Դատարանն է որոշում արդյոք պետությունը հանաչափ և անհրաժեշտ է կիրառել իր հայեցողությունը, միաժամանակ, նախադեպային նշանակություն տալով, ըստ էության, կանխորշում է պետության հայեցողության շրջանակները հետազոյն՝ նմանատիպ հանգամանքներում գործերի քննության ընթացքում։ Դրանով իսկ կարելի է հանգել այն եզրակացության, որ, քանի որ արդյունքում Դատարանն է որոշում պետության կողմից կիրառված հայեցողության անհրաժեշտությունն ու համաշփությունը, հետևաբար, Դատարանն է, ըստ էության, որոշում այն սահմանները, որոնք կիրառելի են պետության կողմից՝ հակառակ դեպքում գործի քննությունը կիազեցնի պետության կողմից մարդու իրավունքների խախտման փաստի ճանաչմանը։ Այսինքն, իրավական

վերլուծության արդյունքում սկզբնապես կարող ենք հանգել այն եզրակացության, որ խնդրու առարկա խստիտուտի հասկացության հայերեն թարգմանությունը պետք է լինի ոչ թե հայեցողության ազատություն, այլ՝ հայեցողության սահմանները, քանի որ մեր դիտարկմամբ, հայեցողությունը դա պետությանը տրված իրավունք է, որի սահմանները, արդյունքում, որոշում է Դատարանը։

Սակայն, գոյություն ունեն նաև այլ կարծիքներ, համաձայն որոնց՝ «հայեցողության սահմանները» չի հանդիսանում արտոնություն այն պետություններին, որոնք նպատակ ունեն ձեռնպահ մնալ կոնվենցիոն նորմերից։ Սակայն, այն վճռորոշ դեր է կատարում դրա շարժափթների և նպատակի վերահսկողության իրականացման ժամանակ։

Մի շարք հետազոտողներ այլ կերպ են ընդունում հայեցողության ազատության եղությունը? «...Ժողովրդավարական հասարակությանը տրամադրված դիսկրեցիոն լիազորություններին, որոնք նպատակ ունեն ձեռնպահ մնալ կոնվենցիոն նորմերից։ Սակայն, այն վճռորոշ դեր է կատարում դրա շարժափթների և նպատակի վերահսկողության իրականացման ժամանակ։

Այսինքն, եթե մերժարանական մոտեցումը ներկայացնում է հայեցողության սահմանները, որպես լիազորությունների սահմանման մերոդ, ապա գործառությանը ենթադրում է հենց լիազորությունները։ «Դատարանի կողմից ճանաչվող ազգային իշխանության հայեցողության ազատությունը ներառում է այդ իշխանության դիսկրեցիոն լիազորությունները, լինեն դրանք արտահայտված կամ չարտահայտված, որոնք անհրաժեշտարար կախված են երաշխափորված իրավունքի էությունից, գործի հանգամանքից, ինչպես նաև հաճախ պաշտպանվող շահից և ներքին դատական ատյանի կողմից ընդուված որոշումից»¹¹։ Կամ, այդ իմաստով, որպես հարաբերական գործոն, կարող է ծառայել պայմանավորվող պետությունների իրավական հանակարգերում որոշակի ընդհանուր դրմինանուի առկայությունը կամ բացակայությունը»¹²։

Այսպիսով, ամփոփելով գրականության մեջ առկա մոտեցումը, կարելի է հանգել այն եզրակացության, որ «հայեցողության սահմանները» Եվրոպայի խորհրդի իրավունքի ենթատերստում կարող է նշանակել պետությանը տրամադրված լիազորությունների շրջանակ, որոնց նաև տիրապետում է Կոնվենցիայով իր միջազգային իրավական պար-

տավորությունները կատարելու համար: Նման սահմանանը համահունչ է հետևյալ արտահայտությունը՝ «Հայեցողության սահմաններ եզրույթը վերաբերում է որոշակի հնարավորությանը, որն ունի պետությունը մարդու իրավունքների ոլորտում փաստացի իրավիճակները գնահատելիս և միջազգային պայմանագրերի նորմերը իրագործելիս»¹⁵:

Խնդրու առարկա հարցի կապակցությամբ առավել հստակ մոտեցման համաձայն՝ «հայեցողության սահմանները»՝ դա թույլատրության սահմանն է, որն ԵԽ մարմինները տրամադրում են ազգային օրենսդիր, գործադիր և դատական մարմիններին, որը տարածվում է մինչև Կոնվենցիայի նորմերից պետության կողմից արգելված շեղման սահմանները կամ կոնվենցիոն էական իրավունքի սահմանափակման՝ Կոնվենցիայի համաձայն պետության կողմից ստանձնած պարտավորությունների հետ անհամատելիության սահմանները»¹⁶: Այսպիսով, հայեցողության սահմանները կարող են բնութագրվել և՝ որպես պետության լիազորությունների համակցություն, և՝ որպես պարտավորությունների կատարման եղանակ:

«Հայեցողության ազատության սահմաններ» տերմինը վերաբերում է ազատության այն սահմաններին, որն ունի իշխանությունը՝ փաստացի իրավիճակները գնահատելիս և մարդու իրավունքների մասին միջազգային պայմանագրերում թվարկված դրույթները կիրառելիս: Հակառակ միշտ հեղինակների կողմից հայտնած կարծիքների՝ քննարկվող սկզբունքի իրավական հիմքը, ըստ էության, դրված է ոչ միայն Ֆրանսիայի *Conseil d'Etat* իրավաբանության մեջ, որտեղ օգտագործվում է «margé d'appreciation» տերմինը, այլև վարչական իրավունքի համակարգում քաղաքացիական իրավունքի իրավասության շրջանակներում: Վարչական հայեցողության բարդ ինստիտուտները զարգացվել են Գերմանիայում, սակայն վարչական հայեցողության մասին գերմանական տեսությունը (*Ermessenssspielraum*) ավելի նեղ է, քան հայեցողության ազատության սահմանները, ինչպես այն կիրառվում է Կոնվենցիայում և Եվրոպական հանձնաժողովի օրենքում:

Միջազգային իրավունքի մակարդակում հայեցողության ազատության սահմանների սկզբունքի առաջին դրսությունը, կարծես թե, ի հայտ է Եկեղեց Մարդու իրավունքների Եվրոպական դատարանի որոշումներում: Կոնվենցիան ընդունվել է 1950թ-ին և հաստատվել է որպես Եվրոպական խորհրդի անդամ պետությունների համագործակցության նվազագույն պայման: Պայմանագրի մասնակից պետություններից յուրաքանչյուրի ունեցած տարատեսակ մշակութային և իրավական ավանդույթները նշանակում էին, որ բարդ է սահմանել մարդու

իրավունքների համաչափ և միասնական եվրոպական ստանդարտներ: Այս համատեքստում, պետությունների կողմից մինչ այժմ բարձրացվում է ինքնիշխանության պաշտպանության հարցը, չնայած նրան, որ Դատարանի կողմից իր առջև դրված խնդիրների լուծումը հնարավոր է միայն մասնակից պետությունների բարեխիղճ և շարունակական համագործակցությունից: Հայեցողության ազատության սահմանների սկզբունքը զարգացվել է՝ փորձելով հավասարակշռություն հաստատել մարդու իրավունքների ազգային պատկերացումների և Կոնվենցիայի արժեքների համաչափ կիրառության միջև: Դա բնորոշ է և, բնականաբար, բխում է այն իրական պատկերացումներից, որ Կոնվենցիան պետք է ծառայի որպես ազգային համակարգի լրացուցիչ մաս: Սկզբունքը նաև թույլ է տալիս հաշվի առնել մասնավոր չշակութային և սոցիալական պայմանները ազգային հասարակությունների շրջանակներում: Հայեցողության ազատության սահմանները տալիս են ձկունություն, որն անհրաժեշտ է Դատարանի և պայմանագրի մասնակից պետությունների՝ իրենց համապատասխան իշխանության ոլորտների կտրուկ հակասություններից խուսափելու համար, և իրավունք է տալիս Դատարանի հավասարակշռելու պայմանագրի մասնակից պետությունների ինքնիշխանությունը՝ Կոնվենցիայով սահմանված իրենց պարտավորությունների առնչությամբ:

Անփոփելով «հայեցողության սահմաններ» հասկացության վերաբերյալ գիտական գրականության մեջ առկա մոտեցումները, ինչպես նաև, վերհանելով խնդրու առարկա ինստիտուտի համակարգային և ֆունկցիոնալ վերլուծության արդյունքները՝ հայեցողության սահմաններ հասկացությունը կարելի է բնութագրել որպես անհատի և հասարակության շահերի հավասարակշռությունն ապահովելու ուղղված պետության լիազորությունների համակցություն, որի սահմանները որոշվում են Մարդու իրավունքների եվրոպական դատարանի կողմից:

¹ Կոնվենցիա մարդու իրավունքների և իշխանարար ազատությունների պաշտպանության մասին, հոդված 19:

² Եվրոպայի խորհրդի Կանոնադրություն, ընդունվել է 05.05.1949թ., ուժի մեջ է Հայաստանի Հանրապետության համար 25.01.2001թ.:

³ Դատարանը կարող է գործը քննության ընդունել միայն այն բանից հետո, եթե սպառվել են միջազգային իրավունքի համապատասխան իրավական պաշտպանության բոլոր ներպետական միջոցները, և վեց ամսվա ընթացքում՝ սկսած այն օրվանից, եթե կայացվել է ներպետական վերջնական որոշումը:

⁴ Stéu, Jersild v. Denmark judgment of 23 September 1994, Series A no. 298; Janowski v. Poland [GC], no. 25716/94, ECHR 1999-I; and Nilsen and Johnsen v. Norway [GC], no. 23118/93.

⁵ Stéu, Lawlessc. Irlande, 1961, 3 CourEur. D.H. -(Ser. A) 25 -?. 57(Application no332/57).

⁶ Stéu, LopesGomesdaSilvav. Portugal, Application no. 37698/97.

⁷ Stéu, Sunday Times v.UK, Applicationno.6538/74.

⁸ Stéu, X and others v. Austria, Application no. 19010/07.

⁹ Stéu, LopesGomesdaSilvav. Portugal, Application no. 37698/97.

¹⁰ Stéu, Jersild v. Denmark judgment of 23 September 1994, Series A no. 298; Janowski v. Poland [GC], no. 25716/94, ECHR 1999-I; and Nilsen and Johnsen v. Norway [GC], no. 23118/93.

¹¹ Stéu, Yourow H, The Margin of Appreciation Doctrine in the Dynamics of European Human Rights Jurisprudence, 1996.

¹² Stéu, Arai-Takahashli Y, The Margin of Appreciation Doctrine and the Principle of Proportionality in the Jurisprudence of ECHR, 2002.

¹³ Stéu, Van Kuck v. Germany, 2003, 37 EHRR 973.

¹⁴ Stéu, նոյն տեղում:

¹⁵ Stéu, Klass v. Germany, 1979-1980, 2 EHRR 214.

¹⁶ Stéu, Brems E, The Margin of Appreciation Doctrine in the Case-Law of the European Court of Human Rights, 1996, 240.

Գևորգ Կոստանյան

Կանդидատ յուրիդիկա գործակալության, դոցենտ.

Докторант института философии, социологии и права
Национальной Академии Наук Республики Армения

РЕЗЮМЕ

*Границы дискреционных полномочий государства в свете
прецедентного права Европейского суда по правам человека
(научно-практический анализ)*

В статье рассматривается вопрос о дискреционных полномочиях государства в свете прецедентного права Европейского суда по правам человека. В рамках статьи также дано собственное толкование границ дискреционных полномочий государства.

Ключевые слова: Европейский совет, прецедентное право, “свобода созерцания государства”, международное право, административное усмотрение, права человека, конвенция..

Gevorg Kostanyan

PHD in Law, Associate professor.

Doctoral at the Philosophy, Sociology and Law Institute
of the National Academy of Sciences of the Republic of Armenia

SUMMARY

*Limits of discrete authority of the state in light
of the case law of the european court of human rights
(scientific and practical analysis)*

The article deals with the issue of discrete authority of the state in the light of the case law of the European Court of Human Rights. The article also gives its own interpretation of the limits of the discrete authority of the state.

Keywords: European Council, case law, “freedom of contemplation of the state”, international law, administrative discretion, human rights, convention.